ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 սեպտեմբերի 2011 թվականի թիվ 124 -Ա

ԻՋԵՎԱՆԻ ԹԻՎ 5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՄԿՐՏԻՉ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Իջևանի թիվ 5 հիմնական դպրոցի 30.06.2011թ կայացած մանկավարժական և ծնողական խորհուրդների որոշումները, ինչպես նաև պատերազմի, աշխատանքի և ներքին գործերի համակարգի վետերանների Իջևանի տարածքային կազմակերպությունների խորհուրդների դիմումը

որոշում եմ

1. Անվանակոչել Իջևանի թիվ 5 հիմնական դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպությունը վաստակաշատ ուսուցիչ Մկրտիչ Արշակի Մարտիրոսյանի անունով:
2. Իջևանի թիվ 5 հիմնական դպրոցի տնօրենին՝
   ա/ սույն որոշումից բխող դպրոցի կանոնադրության մեջ կատարել համապատասխան փոփոխություն և ներկայացնել հաստատման
   բ/ սույն որոշումից բխող փոփոխությունները սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

05 սեպտեմբերի 2011թ.
ք.Իջևան